ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ակցաւեր ամենայն :

Զի՞ քեզ սիրա իմ, զի՞ թագաւորմ քեզ ծընունդ,
Զի՞ յաղթականք քեզ մեծարգոյ փառք թըւին,
Մինչ որոտան պըղինձք և գունդք թունդ 'ի թունդ
Եւ մեծ 'ի սպասս երկնից աղօթքն ուղերձին.
Եւ կամ զի զցայգ աննիրհ քաղաքք համբրէն
Աստեղաձեմ բոցս 'ի բարձունս արձակեն :

Այլուր գու զաչս, յԱծ ևեթ կառուսցես.
Զիք ինչ աստէն ումանութիւն չելբաժին.
Թևոց ընդ թիռ փառք սրբանան փութապէս,
Խուն պըսակաց տևեն և շողք հեշտածին.
Արքայապանծ նիշք և ցօղուն մի չարժեն
Զոր թըռչնեկին եռուն երկինք յապաւէն :

Մեծութեանց զոյգ 'ւ ունայնութի ևս է մեծ.
Ոչ յաղաւնեաց ընդ յարկ հրավառ գունդք տեղան,
Այլ նըշաւակ կանգնին կոթողք բարձրաբերձ :
Ընդ արքայից տէր ըծորդի 'ի մահուան,
Ու 'ի խաչ ձուլէ զոսկէնըշոյլ զթագ նոցին.
Եւ 'ի չիրմացն ծածկին յատակք տաճարին :

Իսկ ո՞ւր բարձունքն, ո՞ւր մեր պարծանք արքունեաց
Նափոլէոն, Կեսար, Պերիկլ, Արտաշէս...
Ա՜հ չիք յատիս թէ անկործան ոք եկաց.
Ո՞վ խորք իբրև՛ զի միաք սուզին 'ի ծոց քեզ :
Զի՞ լըռութիւն թըզաւ 'ի խոր ընդ հողով,
Մինչ զերեսօք՝ այսքան ամբոխք և վըրդով :

Վ. ՀԻԻԿՈԲ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Թոմաթէս 1 պահելու կերպ :

Թոմաթէսը ջարգէ լեցու սանի մը մէջ ու դիր կրակի վրայ ու սկսէ խառնելով եփել : Երբոր աղէկ մը ջուրը դուրս կու տայ, պարպէ մաղի մը մէջ ու ըստ կարի ձգմելով ջուրը վազցու, թափէ. ու Թոմաթէսը նորէն սանին մէջ լեցու ու եփէ խառնելով, որպէս զի որչափ որ կարելի է ցամքի. ու կրակէն վար առ : Կրնաս մէջը հոտաւէտ համեմներ խառնել : Պաղելէն ետև լեցու պուգալներու մէջ, ու երեսնին քիչ մը կարագ լեցու հալեցուցած, ու աղէկ խցաններով պուգալներուն բերանները գոցէ ու զով տեղ մը պահէ : Եթէ զով տեղ չպահես, կրնայ ըլլալ որ խցանին նետեն կամ պուգալները ճաթին :

Այս կերպով ամէն տեսակ դգումներն ալ կրնան եփուիլ ու պահուիլ, միայն թէ դգումը կ'եղեւելու և միջուկը հանելու է, և եփ դրած ատեն վրան քիչ մը ջուր լեցնելու է, ու դգումը եփելէն ետև ջուրը քամելու ու նորէն խառնելով ու եփելով ցամքցընելու է : Այսպէս պահած դգումով մասնաւոր օգտակար ուտելիք մըն ալ կեփումէջը քիչ մը շաքար կը խառնես և քիչ մըն ալ ծեծած նուշ և հաւկթի ճերմկուցը զարկած փրփրցուցած մէջը կը խառնես ու փուռ կուտաս եփելու. կամ տափակ ամանի մը մէջ դրած, խուփն ալ վրան, ու տակէն և վրայէն կրակ դրած կ'եփես : Եաքը կ'ուզես վրան քիչ մը վարդի ջուր կամ ծաղկի ջուր կը ցօղես :

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՒԱԾՔ

Մարդիկ զըպարտելը մեղք կը սեպեն, կասկածելը իրաւունք :

Աւելի կը վնասուին մարդիկ կասկածանաց կարծիքէն, քան թէ եղած զըպարտութենէն :

Զար մարդը կը զըպարտէ, տգէտ մարդը կը կասկածի.

Իսկ խոհեմը կասկածանք իր մտաց մէջ ջնջուցնիր : Եթէ իրեն հարկաւոր կասկածանաց նիւթ է, կը քննէ. ապա թէ ոչ կասկածանքը կը մերժէ :

Զրպարտութիւնը կրակ է, կասկածանքը զկրակը բորբոքող ջոր փայտ է. քննութիւնը կրակը մարող ջուրն է :

Զար մարդը զըպարտութեամբ կրակը կը վառէ. անխոհեմը կասկածանքով մէջը փայտ կը ձգէ. իմաստունը քննելով՝ վրան ջուր կը լեցընէ, կը մարէ :

Աշխարհիս մէջ իրեք տեսակ մարդիկ կը գտնուին. իրենց վիճակին վրայ.

Խիստ քիչ մարդիկ կը տրտնջան իրենց կրած թշուառութեան վրայ.

Շատերը կը տրտնջան թշուառութեան համար առած չըլլալնուն վրայ.

Ուրիշներն ալ ձանձրացած կը տժգոհան իրենց հանգստութեան վիճակին վրայ :

Ահա քեզի ամենքը վկայ՝ թէ աշխարհիս մէջ մարդուս փնտռած հանգիստը չկայ :

---

1 Ֆրէնչ թոմբէճանը :